

ՀԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԹԻՒՐԻՔԱՑ ՔԻՒՐԴԻՍՏԱՆՈՒՄ

(Վանից—Շէմզղինան)

190... թ. մայիսի կէսին էր ճիշտ, երբ ես Վան քաղաքից, բրդական մի մեծ կարաւանի հետ, որ բաղկացած էր 80-ից աւելի բեռնակիր ձիերից և ջորիներից, դուրս եկայ Այգեստանի հարաւակողմը գտնուող Հաջի-Բաքրի կոչուած յորդահոս աղբիւրի մօտից՝ և ճանապարհ ընկայ մի սիրուն ձորակի միջով դէպի արևելք։ Կուռու-Բաշի գետ կոչուած փոքր ջրի ձախ ափից նրա հակառակ ընթացքով բարձրանում էինք քիչ-քիչ դէպի վեր՝ մինչ Նոր-Գիւղի գետգիւղը։

Հաջի-Բաքրի քահնէզից (աղբիւր) կէս ժամու ճանապարհ անցած, մեր աջակողմը՝ գետի հարաւային ափի վրայ տարածւում էր Կուռու Բաշ գիւղը իր ընդարձակ խաղողի և այլ պտուղատու ծառերի այգիներով, որի հարաւի սահմանի վրայ անմիջապէս բարձրանում է Ս. Պաշի բլուրը՝ իր լանջի վրայ Ս. Պաշ փոքր վանքով, որը իր բարձրահայեաց դիրքի շնորհիւ անարգել իր աչքի առաջն ունի Վանայ հրաշալի պանորաման։ Ս. Պաշը ունի մի հայկական որբանոց իր տիրացու վարժապետով, 15 որբերով և մի մոկացի գաղթական վարժապետով։ Վանքը աղքատ է, հազիւ մի քանի տասնեակ ոչխարներ, մի քանի արտօրայք, մի քանի լծկաններ և Վանի բազարում մի քանի խանութներ—ահա նրա ամբողջ հարստութիւնը։

Բլրի ստորոտը տարածուող Կուռու-Բաշը համարեա զուտ հայաբնակ է. 96-ի արիւնշաղախ սնրաափներից առաջ գիւղը ներկայացնում էր 100 տնից աւելի բնակչութիւն ունեցող բարեշէն մի ապատ, շրջապատուած ճոխ բուսականութեամբ, աղբիւրներով և առուակներով, որոնք պտտեցնում են բազմաթիւ ջրաղացներ. ունէր եկեղեցի և ուսումնարան։ Սակայն այժմ... Կուռու-Բաշը բոլորովին այլ բան է ներկայացնում. բնակչութիւնը պակասել է, իսկ մնացածներն էլ չքաւոր, աղքատ և անպատու պար. աղքատացել է և բնութիւնը, հարիւրաւոր լիտրներով գինի մատակարարող երբեմնի սաղարթախիտ այգիները՝ այգետէրե-

րին՝ աշնան ժամանակ ուտելու խաղող անգամ մատակարարելու կարողութիւնից զրկուել են...

Կուռու-Բաշից քիչ դէպի արեւելք՝ Վարազայ վանքը տանող ճանապարհի վրայ երևում են հեռուից այն մի քանի փոքր ժայռերը, որոնց ներքև ապաստանած՝ 21/2 յունուար 1898 թուին ընկել են հերոսաբար, երեք հարազատ հայեր:

Ձախակողմը բարձրանում է Վարազայ լեռը, որի վրայ երևում է Վարազայ հռչակաւոր վանքը իր ցից գմբէթներով: Շատ չանցած ճանապարհի հովիտը վերջանում է և սկսում Նոր Գիւղի գեաղիկի զառիվեր վերելքը, որը տևում է 2 ժամից աւելի: Ահա գեաղիկի բարձրութիւնների վրայ ենք. Վարազայ սրածայր գմբէթները փայլում են հեռաստանում արևի ճառագայթների ներքոյ, որպէս և նրան շրջապատող ծառաստանները Վարազայ ձորակում. քիչ բարձրանալուց յետոյ նրա դրմբէթները մի անգամ էլ բարեհաճում են ցոյց տալ մեզ իրանց կոնաձև կատարները, և ապա ծածկւում բլուրների երկար ստուերներում. ծածկւում է նոյնպէս Վանայ ընդարձակ և հարթ դաշտավայրի հրաշալի պատկերը՝ լայնանիստ քաղաքով և անառիկ ամրոց-բերդով. ալեծածան ծովը միայն չի ուզում տակաւին թաքնուել մեր կարօտ աչքերից:

Նոր-Գիւղի գեաղիկի բարձունքի վրայ լինում է մեր առաջին իջևանը, հանգստավայրը գիշերուայ համար: Օրուայ երկարութիւնից յոգնած, ճանձրացած՝ արեգակի խոշորացած սկաւառակը դանդաղօրէն դէպի իր մուտքն է դիմում, և տակաւ առ տակաւ կորչում ծովակի արեամեան և հիւսիսային սահմանները եզերող Ներքովթ-Գրգուռ և Միփան լեռների յետևը՝ հանդիսացնելով Վանայ հրաշալի վերջալոյսներից մէկը:

Մայիսեան դեփիւռը փչում է մեր բացօդեայ իջևանի յատակին փռած ընդարձակ, բնութեան դալար և խայտաճամուկ թելերից հիւսած, ճոխ գորգի վրայից և ծածանում նրան: Մեր շրջապատի բազմաթիւ վճիտ աղբերակները սնունդ են տալիս այդ բնական գորգի դալար հիւսկէներին և աւելացնում նրա անպատմելի հմայքը:

Ինչքան խաղաղ և անվրդով է լինում քունը՝ գիշերային այս ղով պահին, բնութեան ազատ գրկում, սարի կատարին, կանաչութիւնների ծոցը, երկնային աստեղազարդ մութ-կապոյտ կամարի ներքոյ: Գիշերային այդ վեհ խաղաղութիւնը ընդմիջւում է սակայն մեր շրջակայքը արածող ձիանների զուարթ խրխնջոցով և քիւրդ ձիապանների, լեռների այդ ազատ որդիների վայրենի երգի մեղմ լօ-լօներով:

Դեռ արշալոյսը չբացուած, կէս գիշերին դուրս եկած կի-

սալուսնի արծաթ ճառագայթների ներքոյ, որ լուսաւորում էին պայծառ լուսով մեզ և մեր կանաչ շրջակայքը՝ շարունակում ենք մեր երեկուայ ընդհատած ճանապարհը *), իջնելով Նոր-Գիւղի գեադիւկից, որի արեւելեան հարաւային էջը հետզհետէ կորցնում է իր բուսական հարստութիւնը և ստորոտներում բոլորովին ժայռոտ է դառնում:

Բլրի ոտորոտում մի տափարակի վրայ ընկնում է Նոր-Գիւղը 200 տուն հայ բնակիչներով: Առաւօտեան մթնաշաղին անցնում ենք այդ գիւղի մօտով, լուսնի աղօտացած շողերի ներքոյ: Գիւղի հայ բնակիչները ընդունակ, կտրիճ և աշխատասէր մարդիկ են, մի եկեղեցի ունին և մի ուսումնարան, վերջինս փակած դռներով:

Դուրս գալով գիւղից և մտնելով Վերին-Պոշաք կոչուած դաւառակի սահմանում, արեւածագի ժամանակ առհասարակ փչող արեւելեան մրկեցուցիչ ցրտի տակ, անցնում ենք Զեռնակա-տար կոչուած մերկ, քարքարոտ, բարձր լեռնադաշտի վրայից, որի հարաւ արեւմտեան ստորոտով անցնում է Պոշաքի (անուշ-ջուր) գետը՝ յորդացած՝ գաղնան անձրեւներից կազմուած հեղեղների շնորհիւ: Շատ չանցած՝ Պոշաքի վրայ կապուած մի փայտեայ, բաւականին հաստատուն կամրջի վրայից անցնում ենք գետի հանդիպակաց ափը: Կամրջի կողքին մնում է դեռ կանգուն, անցորդների հսկողութեան և ապահովութեան համար շինուած պահականոցը, ուր սակայն այժմ ոչ ոք է ապրում:

Ընթանալով գաղնանային արեւի մեղկ շողերի տակ, այս անգամ Պոշաքի ձախ ափով, ցերեկուայ շողից ստիպուած՝ հանգիստ ենք առնում Պոշաքի եղեղնուտ ափի մօտ, նրա բուսառատ ընդարձակ հովտում: Ապա բարձրանալով մի բլրակ՝ նրա գագաթից մեր առաջն է բացւում Պոշաքի ընդարձակ դաշտի համայնապատկերը: Մշուշի մէջ հազիւ նշմարւում է Պոշաքի բերդը, որի ստորոտում տարածուած է Պոշաքի գիւղաքաղաքը: Նախորդ գիշերուանից մինչև այժմ դեռ ոչ մի շէն չէր երևացել մեր աչքին շրջապատի բլուրների պատճառով, որոնց պարփակած հովիտով ընթանում էր մեր ճանապարհը:

Գիշերուան երեք ժամ մնացած, մենք մօտենում ենք Պոշաք գիւղաքաղաքին. մեր առաջ տնկուած է Պոշաքի հըսկայական քարաշէն բերդը՝ բարձրացած Պոշաք գետի աջ ափի

*) Պէտք է նկատել որ Վանից-Շամաղիան տանող բնական, անկանոն, անխնամ թողնուած ճանապարհը երկարում է հարաւ-արեւելեան ուղղութեամբ, երբեմն դէպի արեւելք փոքր շեղումներով:

անմատչելի քարաժայռի գագաթին ¹⁾։ Նոշապ բերդաքաղաքը տարածւում է բերդի ստորոտում, գետի վրայ կապուած մի հին, հոյակապ կամուրջով։

Երբեմնի շէն և մարդաշատ Նոշապը, այժմ համարեա ամայի է և կիսաւեր՝ հազիւ հարիւր տուն բնակիչներով, որոնց երդիկները բուխարիներից վաղուց է մարել հայկական օճախի սրբազան ծովը։ Անցեալ դարի առաջին կէսին բերդաքաղաքը ունեցել է մօտ 1,500 տուն բնակչութիւն, մեծամասնութիւնը հայ, իսկ փոքրամասնութիւնը՝ քիւրդ ազգաբնակչութեամբ։ Նոյն դարու քառամասկան թուականներին՝ Բէդհրխան բէկի, խան-Մահմուդի և այլ քրդական բռնակալների տիրապետութեան օրերում, Վասպուրականում, Նոշապի տիրոջ՝ Ամինբէկ-պարոնի, թիւրք կառավարութեան դէմ մղած անկախութեան կռիւների, սարսափների ժամանակ ֆրասուած հայերը թողնում են իրանց բնակչութիւնը Նոշապում, և խտանում շրջակայ հայաշատ վայրերը, Ալբակ և այլն, և կամ ապաստան որոնում՝ համեմատաբար խաղաղ՝ Վան քաղաքում։ Այժմ հազիւ 100 տուն թիւրք և քիւրդ բնակիչներով այս բերդաքաղաքում, որ գայմազամանիստ է (գաւառապետի վայր) տեղ տեղ նշմարւում են տակաւին հայկական հին եկեղեցիների փլատակներ, մերթ կանգուն կամարներով, մերթ գլխովին խոնարհած, որոնցից մէկը բերդի ստորոտում. հետքեր և նմուշներ՝ անցեալի հայ ազգաբնակչութեան գոյութեան, քրդաբնակ այս հեռաւոր վայրերում։ Այժմ միայն գետի ձախ ափում, կամրջին շատ մօտ, ճանապարհի վրայ, երևում են Վանից պանդխտած մի քանի հայ առևտրականների և զանազան արհեստավորների խանութները։ Ժամանակի տարածամութիւնը դժբախտաբար արգելք է հանդիսանում Նոշապի այդ հռչակաւոր անցեալ ունեցող, բայց այժմ կիսաւեր բերդը իր մանրամասնութիւններով դիտելու ²⁾, և մենք

¹⁾ Այդ հինաւորաց ամենի բերդի լուսանկարը տես «Գեղունի» 1904 թ. Կենտրին։

²⁾ Այս մասին տես Մ. Միրախորեանի, «Ուղևորութիւն ի հայ. գաւառն արեւելեան Տաճկաստանի»։ II, ԻԵ. Պոլիս. Պէտք է ասել, որ Նոշապայ բերդը, որը կրում է խոր հնութեան դրօշմը, որպէս և՛ իր շրջակայները, շատ քիչ անգամ խուզարկութիւնների, գիտնական հետազոտութիւնների առաքելայ են եղել, առաջինը՝ գիտնական Էդ. Շուլցն է եղել, որ անցեալ դարու քառամասկան թուականների վերջերին՝ «Աշրուդ-Տարգայի» (Մալխանէ գիւղի մօտ, ոչ հեռու Նոշապից) հռչակաւոր բեկազգի արձանագրութեան առիթով այցելել է այս կողմերը. ինչպէս յայտնի է տարաբաղդ գիտնականը սպանուել է քիւրդ աւաղակների ձեռքով Զիւլամերկ գաւառում ե-

Թողնում ենք խոշապը և գետի աջ ափով, խոշապի ընդարձակ դաշտավայրի հիւսիսային սահմանով ընթանալով, երեք ժամից յետոյ հասնում ենք Չուխ լեռան ստորոտը, որից բղխելով խոշապայ գետի ակունքները՝ կազմում են քիչ-քիչ խոշապ-ջուրը, Գետը տակաւ յորդելով կտրում է խոշապ և Հայոց-Ձոր, Վանայ նահանգին պատկանող գաւառները, և ոռոգելով նրա դաշտօրայքն և մարգագետինները, թափւում է Վանայ ծովը, խորաբայ-Քէօշկ (աւերակ պատւատ) կոչուած մի հին ամրոցի պարըսպների ներքոյ, ուր, ըստ աւանդութեան, անցեալում իշխել է ոմն Եղիզ-աղա քիւրդ բէկը: Խորաբայ-Քէօշկից ոչ հեռու ընտրում ենք մեր ճանապարհորդութեան երկրորդ գիշերուայ հանգստավայրը, մի կանաչաւէտ տեղում, դարձեալ երկնքի կամարի բաց, աստեղազարդ, կապոյտի ներքոյ, ուր մեր առաջից անուշ խոխովելով հոսում է, խոտերի և փարթամ ծաղիկների արանքից, խոշապ գետի օժանդակ առուակներից մէկը:

Առաւօտեան մթնշաղին շարունակելով մեր ճանապարհը, անցնում ենք մի քարքարոտ լեռնադաշտ՝ տարածուած Չուխ լեռնաշղթայի ստորոտում, երբ մեր առաջ բարձրանում է խոնաւ մշուշի մէջ պարուրուած Չուխ լեռը (9,000 ոտք բարձր ծովի մակերևոյթից), որ իր օժանդակ շղթաներով երկարում է, արևելքից արևմուտք, Վանի և Հին Հէքիաքիի կուսակալութիւնների սահմանագլխի վրայ և բաժանում խոշապ գաւառը Աղբակ գաւառից: Չուխի երկու ստորոտներում շինուած են մի-մի պահականոցներ (խան), ուր ճանապարհորդների և ճանապարհների պաշտպանութեան համար հսկում է մի տեղացի պահպան զինուոր միայն՝ իշխանութիւնից կարգուած, ընկեր, ի հարկէ, շրջապատի աւազակների և թալանողների:

Առաջին խանի մօտ, լեռան ստորոտից բղխող մի ջինջ աղբերակից քիչ վերև, մեզ ցոյց են տալիս, անցեալ դարու 80-ական թուականների վերջերին, Աքրիպպասեանի և ընկեր Գոլոշեանի սպանման վայրը, մերձակայ բլրի վրայ, ուղղմական տեսակէտից մի ոչ այնքան յարմար ժայռի մօտ, քրդերի հետ ունեցած անհաւասար կռոււմ: Նշանակելի է այն զարմանալի զու-

րիտասարդ հասակում (1829 թ.): Շուրջից յետոյ նոյն նպատակներով այցելել է և անգլիացի գիտնական A. H. Sayce: Դեռ սրանից մի քանի տարի առաջ, այս շրջաններում ծանօթ բեհազէր արձանագրութիւնների ընդգրկը ճշտելու, վերականգնելու, և նոր սեպածե արձանագրութիւնների խուզարկութեան մտքով ճանապարհորդութիւն են կատարել գերման գիտնական-բեհազէաներ՝ D-r. Waldemar Belk և G. H. Lehmann՝ անցնելով ապա դէպի Շէմզգինան և Մուսուլի կողմերը:

գաղիպութիւնը, որով մեզ ուղեկցում է այդ յիշատակութեան ար-
ժանի կոուխն՝ մասնակցող մի քիւրդ, մեր ձիապաններին, չորա-
ցած, սեւ և նոզկալի կերպարանքով մի մարդ, որ ինքնաբաւա-
կանութեամբ պատմում էր իրանց այն սխրագործութիւնների
մասին, որ կատարուել էր քիւրդ վոհմակի և երկու, միայն
երկու, անմոռանալի անձնուրացների միջև եղած ընդհարման
ժամանակ:

Չուխի լանջերով, քարքարոտ ձորակի միջով սկսւում է
եւթը Չուխ լեռան, որը տեւում է երեք-չորս ժամ մօտաւորա-
պէս: Մայիս ամսի վերջի կիսին՝ Չուխի գազաթը ներկայա-
ցնում է տակաւին նորարողքով զարնան բոլոր հրապոյրները,
արեգդէմ տեղերը դալար կանաչով և պէս-պէս ծաղիկներով
ծածկուած, հակառակ կողմը՝ ձիւնի նոր հալած կողերից, ձիւ-
նի նօսրացած շերտի միջից դուրս է տնկել իր սպիտակ,
սիրուն գլուխը՝ Չուխի ձիւնծաղիկը: Չուխի հարաւ արեւ-
ելեան վայրէջքը պարզում է մեր առաջ զարնանային ամե-
նահրաշալի պատկերը՝ բազմազան տեսարաններով. նեղ շա-
ւիղի երկու կողմերը լիքն են, խիտ բուսականութեան թա-
ւիշի հետ զիրկընդխաւն, բազմազունեան ծաղիկներ՝ անհա-
մար պէսպիսութեամբ, խոտապահանջ բուսաբանի հետա-
քըրքիր խուզարկութեան և ժողովածուններին առատ նիւթ և
տեսակ մատակարարելու ընդունակ:

Իջնելով Չուխի ստորոտը, մենք մտնում ենք Աղբակ եր-
բեմնի հայաշատ գաւառը, ուր մեր հանդիպած առաջին գիւղը
լինում է Չուխը, ճանապարհի աջակողմ՝ շինուած մի բըլ-
րակի տափարակ գազաթի վրայ, հայ և թուրք բնակչութեամբ:
1896 թ. հայկական կոտորածներից առաջ, գիւղը ունեցել է 24
տուն բնակիչ, սերմ՝ 80 բեռ, ոչխար՝ 800, եզ և կով՝ 112,
զոմ՝ 35, ջրաղաց՝ մէկ, ձիթահան՝ մէկ. կոտորածի ժամանակ,
գիւղը ամբողջապէս ենթարկուել է քրդական թալանի, ունեցել
է տնձի կորուստ՝ 2 հոգի սպանուած. գիւղը մատնուել է այժմ
վեշին ծայր թշուառութեան...

Ճանապարհի ձախակողմը, Չուխ գիւղի ճիշտ դէմուդէմ
ընկնում է Բաբլասան փոքրիկ գիւղը, որ ունեցել է մի ժամա-
նակ 14 տուն հայ բնակիչ, 60 բեռ սերմ, 250 ոչխար, 28 զոմ,
130 եզ և կով. գիւղը թալանուել է ամբողջապէս, տնձի կորուստ
է տուել՝ մէկ հոգի սպանուած, մի կին առեւանգուած, և չորս
տուն էլ կրօնափոխ է եղել բռնի ստիպման ներքոյ:

Անցնելով Բաբլասանի մօտով, և քիչ յետոյ Չապ գետի
օժանդակ փոքր ճիւղերից մէկը անցկենալով՝ բարձրանում ենք
Եէդի-Թէփէլէր (եօթ բլուրներ) կոչուած կանաչապատ բլուր-

ների մի երկար շարք՝ մայիսեան դալար խոտերով և ծաղիկներով հարուստ, և որի գագաթի մօտ, կանաչ բուսականութեան գրկում, կանոնէք մեր ճանապարհորդութեան երրորդ գիշերային հանգիստը:

Կ—ցի

(Կը շարունակուի)

*
* *

Քաղած վարդը թփին չի դառնայ նորից.
Յետ չի գայ յաւէրժ ժամն անցած օրից:

Անցած կեանքդ հիմա երանգ է, մշուշ.
Վիշտ ու սէրդ հիմա յուշեր են անուշ:

Սիրտդ մաքուր պահէ ու բարի արած
Որ ամպ չը նստի յուշերիդ վրայ:

Մի՛ վռագիւր... մահին կ'հասնիս վաղ-ուշ,
Զեղածի պէս կանցնին երազն ու մշուշ...

Ա. Խահաղեան